

3.3. Ընտրական գործընթաց

3.3.1

Յուրաքանչյուր մասնակից ունի մեկ քվեաթերթիկ (կցվում է, հավելված 2) ստանալու և մինչև 5 թեկնածուի օգտին քվեարկելու իրավունք: Քվեաթերթիկում ընտրողները նշումները կատարում են նախընտրելի թեկնածու(ներ)ի անունների դիմաց՝ համապատասխան վանդակ(ներ)ում X նշանով կամ ցանկացած **այլ նշումներով**: 5-ից ավելի թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկները համարվում են անվավեր:

3.3.2

Քվեաթերթիկում նշվում է թեկնածու անձի անուն-ազգանունը, վերջինիս կողմից ներկայացվող կազմակերպության անվանումը: Քվեաթերթիկում թեկնածուների անունները շարադրվում է այբբենական կարգով:

3.3.3

Քվեաթերթիկում տեղ են գտնում այն թեկնածուները, որոնք մինչև ընտրությանը նախորդող 6-րդ օրը, ինքնաբացարկ չեն հայտնել: Ինքնաբացարկի առկայության դեպքում, համապատասխան տեղեկատվություններ են ավելացվում www.mca.am կայքի թեկնածուների բաժնում:

3.3.4

Տպված քվեաթերթիկների քանակը հավասար է գրանցված մասնակիցների քանակի 105%-ին:

3.3.5

Քվեաթերթիկները բազմացնում է ՇԽ օգնականը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գրասենյակում: Քվեաթերթիկների բազմացմանը պետք է ներկա գտնվեն Ընտրական Հանձնաժողովի անդամները:

3.3.6

Քվեաթերթիկների հակառակ կողմում, քվեարկության նախորդ օրը ստորագրում են Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները:

3.3.7

Ցանկության դեպքում, թեկնածուները ընտրության նախորդ օրը, ժ.15:00-16:00-ի ընթացքում կարող են քվեաթերթիկի հակառակ երեսին զետեղել իրենց ստորագրությունները:

3.3.8

Մինչև ընտրությունները քվեաթերթիկները պահվում են ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի մոտ: Մինչև 2.7 կետի համաձայն Ընտրական հանձնաժողովի լիազորությունների ավարտն Ընտրական հանձնաժողովն է պատասխանատու քվեաթերթիկների պահպանության համար: Ընտրական հանձնաժողովի լիազորությունների ավարտից հետո քվեաթերթիկները կփոխանցվեն ՀՄՀ-Հայաստանին արխիվացման համար՝ համաձայն վերջինիս ներքին կանոնակարգերի:

3.3.9

Քվեաթերթիկները ՇԽ օգնականը տրամադրում է ընտրական հանձնաժողովի նախագահին, քվեարկության օրը ժամը 8:50-ին՝ քվեարկության վայրում:

3.3.10

Ընտրության մասնակիցը քվեարկության է ներկայանում անձնագրով:

3.3.11

Քվեարկությանը մասնակցում է մասնակցության հայտում նշված և ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված կազմակերպության լիազոր ներկայացուցիչը: Քվեարկությանը տվյալ կազմակերպության անունից այլ անձի մասնակցությունը չի թույլատրվում:

3.3.12

Քվեարկությունը.

- Ընտրությունն իրականացվում է 1 օրում, փակ, գաղտնի քվեարկությամբ: Քվեարկությունը անցնում է ժամը 9⁰⁰-18⁰⁰ ընթացքում:

- Ընտրությունները կանցկացվեն ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից նախանշված վայրում՝ խորհրդակցելով Ընտրական հանձնաժողովի հետ:

- Ընտրական հանձնաժողովը ընտրությունների արդյունքներն ամփոփում է ընտրության օրը ժամը 18:00-21:00-ը:

- Ընտրությունների արդյունքները ու համապատասխան արձանագրությունը հրապարակում են Ընտրական հանձնաժողովի նախագահը եւ անդամները նույն օրը մինչև ժամը 21:00-ը՝ հրավիրվող մամլո ասուլիսի ժամանակ:

- Ամփոփիչ արձանագրությունը տրամադրվում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ օգնականին նույն օրը մինչև ժամը 21:30-ը: Արձանագրությունը տեղադրվում է www.mca.am կայքում, քվեարկության հաջորդող աշխատանքային օրը, մինչեւ ժամը 16:00-ն:

- Ընտրությանը դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ առանց նախնական հավատարմագրման եւ առանց ընտրական գործընթացներին խանգարելու: